ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **15/02/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:
Բացակա էին՝ Գնել Թովմասյանը, Ռուբեն Սաֆարյանը, Նունիկ Ստեփանյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գարիկ Բաղալյան, Լեյլի Խաչատրյան, Գարիկ Գևորգյանը, Վոլոդյա Հովհաննիսյանը, Կամո Առաքելյանը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Մեղրաձոր բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնակատար Վոլոդյա Հովհաննիսյանը ավագանու անդամներին ներկայացրեց ավագանու անդամ Գնել Թովմասյանի որդու Գերասիմ Գնելի Թովմասյանի կողմից ներկայացված իր հայրիկի հիվանդության վերաբերյալ փաստաթղթերը և առաջարկեց վերջինիս բուժման համար տրամադրել դրամական աջակցություն՝ 500000 ՀՀ դրամի չափով:

Առաջարկությունը ընդունվեց, հարցը ներառվեց օրակարգում:

<<Երեխաների աջակցության հիմնադրամ>> Կազմակերպության տնօրեն Կամո Առաքելյանը, ներկայացրեց հիմնադրամի աշխատանքը գործունեությունը և գրությունը՝ ուղղված Ծաղկաձոր համայնքի ղեկավարին:

Առաջարկվեց <<Երեխաների աջակցության հիմնադրամ>> Կազմակերպությանը դրամական աջակցություն տրամադրելու մասին հարցը օրակարգից հանել, մշակույթի, կրթության, սպորտի, զբոսաշրջության և սոցիալական հարցերի մշտական գործող հանձնաժողովի կողմից կազմակերպել հիմնադրամի այցելություն, ծանոթանալ աշխատանքին և գործունեությանը, անհրաժեշտության դեպքում հարցը քննարկել հետագա նիստերի ընթացքում:

Առաջարկությունը ընդունվեց, հարցը հանվեց օրակարգից:

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 124 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին:

3.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին:

4. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

5. <<ՄՏՍ -Հայաստան>> փակ բաժնետիրական ընկերությանը հենասյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին:

6. Ծաղկաձորի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու մասին:

7. Նելսոն Տոնոյանին գումար վերադարձնելու մասին:

8. Գերասիմ Գնելի Թովմասյանին դրամական աջակցություն տրադրելու մասին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29/
Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հետևյալ ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը՝ համաձայն հավելվածների՝

1) Հավելված
1՝ Ծաղկաձոր համայնքի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ,

2) Հավելված 2՝ Ծաղկաձոր համայնքի Խաչիկ Մուրադյան փողոցի մի մասի և Մհեր Մկրտչյան փողոցին զուգահեռ ճանապարհի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ,

3) Հավելված 3՝ Ծաղկաձոր համայնքի Սարալանջի փողոցից դեպի Նոր Թաղամաս տանող ճանապարհի և Նոր Թաղամասի փողոցների կառուցման և կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ,

4) Հավելված 4՝ Ծաղկաձոր համայնքում խաղահրապարակի կառուցման և դպրոցի բակի ցանկապատի և հենապատի բարեկարգման աշխատանքներ,

5) Հավելված 5՝ Ծաղկաձոր համայնքի տարածքում կանգառների կառուցման, տարածքի բարեկարգման աշխատանքներ,

6) Հավելված 6՝ Ծաղկաձոր համայնքի Մհեր Մկրտչյան և Չարենցի փողոցների հենապատերի վերակառուցման աշխատանքներ,

7) Հավելված 7՝ Ծաղկաձոր համայնքի <<Նախադպրոցական ուսումնական հաստատություն>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման աշխատանքներ,

8) Հավելված 8՝ Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցներում ջրահեռացման առուների հիմնանորոգման աշխատանքներ,

9) Հավելված 9՝ Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 1-ին փողոցի, Հանքավան գյուղի 3-րդ փողոցի և Փյունիկ գյուղի 1-ին փողոցի 4-րդ նրբանցքի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ,

10) Հավելված 10՝ Ծաղկաձոր համայնքի Արտավազ գյուղի 1-ին փողոցի 2-րդ փակուղու , 1-ին փողոցի 2-րդ նրբանցքի և 2-րդ փողոցների կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ,

11) Հավելված 11՝ Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ գյուղի 4-րդ փողոցի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ,

12) Հավելված 12՝ Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի 2-րդ, 5-րդ և 8-րդ փողոցների կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքներ,

13) Հավելված 13՝ Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի 1-ին փողոց, 1-ին փողոց 11 նրբանցք, 11 փողոց 4-րդ նրբանք, 9-րդ փողոց 4-րդ նրբանցք և 9-րդ փողոցներում, Արտավազ գյուղի 2-րդ փողոցում և Մարմարիկ գյուղի 4-րդ փողոցում ջրահեռացման առուների հիմնանորոգման աշխատանքներ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 124 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի <<Ծաղկաձոր համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների 2022 թվականի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 124 որոշման թիվ 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30/

Լսեցին
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Գարիկ Մամիկոնի Գևորգյանին նշանակել Ծաղկաձոր համայնքի ղեկավարի տեղակալ:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33/

Լսեցին
<<ՄՏՍ- ՀԱՅԱՍՏԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 43 որոշումը և <<ՄՏՍ- Հայաստան>> փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ <<Ռեդինետ>> փակ բաժնետիրական ընկերության գրությունը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

<<ՄՏՍ- Հայաստան>> փակ բաժնետիրական ընկերությանը թույլատրել օգտագործել Ծաղկաձոր համայնքի, Օրբելի եղբայրներ փողոցում գտնվող 8 հենասյուները, Խաչատուր Կեչառեցի փողոցում գտնվող 17 հենասյուները և Օլիմպիական փողոցում գտնվող 17 հենասյուները՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված վճարի դիմաց:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների քանակական կազմը սահմանել ավագանու 5 անդամներից:
2. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմում ընդգրկել համայնքի ավագանու ներքոհիշյալ անդամներին՝

1) Ոսկան Եղիազարյան,

2) Արմենուհի Առաքելյան,

3) Ռուզաննա Պետրոսյան,

4) Գոհար Հովհաննիսյան,

5) Գրիգոր Ղարիբյան

3. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի <<Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու մասին>> թիվ 83 որոշումը և Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին>> թիվ 65 -Ա որոշումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35/

Լսեցին
ՆԵԼՍՈՆ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Նելսոն Տոնոյանի դիմումը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Նելսոն Տոնոյանին վերադարձնել 900125007030 հաշվեհամարին ավել փոխանցված 8500 /ութ հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36/

Լսեցին
ԳԵՐԱՍԻՄ ԳՆԵԼԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Չեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և Գերասիմ Գնելի Թովմասյանի դիմումը՝

Գերասիմ Գնելի Թովմասյանին տրամադրել դրամական աջակցություն՝ 500000 /հինգ հարյուր հազար դրամի չափով՝ իր և հայրիկի առողջական խնդիրները լուծելու համար:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼՈՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գայանե Բաղդասարյանը